


ՀՈՒՆԻՈՐ ՀԼՅՐՈՒԹԻՒՆԸ



Հեղինակ՝

ԱՆԴՐԷ ԼՈՒՖ

Թարգմանեց՝

ՄԱՇՏՈՑ ՎԱԿԷ ԴԱԶԱՐԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Սիրելի Ընթերցող,

օգտագործելով Հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:

Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.

gradaran@mashtoz.org

Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:

Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խնդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

Մաշտոց Աստի Ղապարեան

ՀՈՒՆԻՈՐ ՀԱՅՐՈՒԹԻՒՆԸ

Կարող ենք ասել՝ որ անապատական վանականութեան գրականութիւնը նոյնանում է հոգեւոր հայրութեան կիրարկման հետ: Ապոֆտէզման, որն այդ գրականութեան կարելի է ասել հաստատուն մասն է, կազմուած է հարց-պատասխան նախագծի համաձայն, ուր վանականներից մէկը հարցնում է ծերերից մէկին. «Աբբա, մի խօսք ասա ինձ. ինչպէ՞ս կարող եմ փրկուել»:

Շարադրուած գրականութեան մէջ այս բանաձեւը յայտնուում է միայն 4րդ դարի սկզբին, բայց իր սեմական բնոյթը վկայում է նրա աւելի վաղ ծագման մասին, արմատներով՝ որ հասնում են հրէա-քրիստոնէական սկզբնական աւանդութիւններին: «Աբբա» եզրը պահպանուել է այնպէս՝ ինչպէս որ է արամայերէնում, թէեւ ղպտերէնը այն արտասանում է որպէս «ա՛փա»: Սուրբ Հոգու համաձայն ապրուած կեանքն աւանդողին հայր անուանելու սովորութիւնը շատ շուտով մոտք էր գործել քրիստոնէայ հասարակութիւններից ներս, հակառակ Յիսուսի իսկ կողմից տրուած յստակ հրամանի. «Երկրի վրայ ոչ ոքի մի՛ անուանէք հայր» (Մտթ 23, 9): Եւ սակայն, Յիսուս ինքը հայրեր է անուանում նրանց՝ ովքեր իր ունկնդիրներին նախորդել են Աստուծոյ հանդէպ հաւատքի կեանքում (հմմտ. Ղկա 1, 55; Յվհ 6, 31.49; 1Կր 10, 1): Հետեւաբար, արտայայտուելու այս կերպը վաղուց ի վեր գործածական էր դարձել, եւ այս պատճառով է՝ որ վանական աւանդութիւնը նոյնպէս այն որդեգրել էր. իսկ Մատթէոս 23, 9 հատուածին ուղղուած յաւակնոտ որեւէ հայեացք – որի նպատակն էր սեփական հօր հովանաւորութեան սահմաններից դուրս փախչելը – իսկոյն որակաւորուում էր որպէս սատանայական խաբէութիւն եւ հպարտութեան ակնյայտ նշան: Այս առումով միշտ յիշարժան է էրոն անուանով վանականի տխուր պատմութիւնը, որին տիրել էր հպարտութիւնը եւ «գոռոզութիւնը՝ Հայրերի նկատմամբ»¹: Վանական աւանդութեան մէջ ճանաչուած հայրութիւնը՝ Յիսուսի կողմից մերժուածը չէ, այլ ճիշտ ընդհակառակն՝ լիովին համաձայն է Յիսուսի կողմից ուսուցանուածին, նմանութեամբ հայրական այն պատկերի՝ որ Նա եկել էր ցոլացնելու երկրի վրայ:

Աբբայի հոմանիշն է ծերը, սա նոյնպէս աստուածաշնչեան մի եզր, որ չի մատնանշում մարմնական տարիքը, այլ աւելի՝ քրիստոնէական հասարակութեան ներսում իմաստութեան եւ խոհեմութեան մէջ հասունութիւնը (հմմտ. Գրծ 11, 30; 14, 25; 15, 2.4.6.22; 20, 17; 1Տմ 5, 17; Տիտ 1, 5; 1Պտ 5, 1): Յատուկ կերպով յայտնի մի դէպքում, թեթեւօրէն ընդարձակուելով դարձել է *kaloghiros*, այսինքն՝ գեղեցիկ ծեր, որով Պակոմը ողջունում է մեծն Մակարին, որը խոնարհաբար թաքնուել էր իր վանքի նորընծաների շարքի ետեւում, բայց չէր կարողացել թաքնուել միւս մեծ Հօր հայեացքից²:

Ծերերի առջեւ հարց դնող վանականի դիտաւորութիւնը առանց բացառութեան արտայայտուում է «ինչպէ՞ս կարող եմ փրկուել» կամ «որպէսզի փրկուեմ» բանաձեւով: Այստեղ նոյնպէս երեւում են սկզբնական արամայերէնի հետքերը, ուր միեւնոյն արմատը արտայայտում է երկու գաղափարները միասին:

¹ Palladio, *Historia Lausiaca*, 26, 1.

² Նոյն, 18, 16.

Թող օրհնի քեզ, Աստուած Թող օրհնի քեզ, Աստուած Թող օրհնի քեզ: ... Հրեշտակ է, ո՛չ թէ մարդ»:

Տասներկու տարի տեւած սպասումը գոհացնելու եկող խօսքը չէր կարող կեանքից անջատ լինել: Խօսքը, յիրաւի, հասնում է միայն այն չափով՝ որքան որ սպասում է աշակերտի կողմից, պահանջուած տրամադրուածութեամբ: Բաւական չեն արքայի իմաստութիւնն ու փորձառութիւնը: Նոյնքան բախտորոշ է աշակերտի ներքին հոգեւոր պատրաստուածութիւնը, որն այսպէս ասած գնում է ազատելու եւ բխեցնելու խօսքը արքայի սրտում եւ շրթունքների վրայ: Եթէ խօսք խնդրողի դիտաւորութիւնը անշահախնդիր չէ, արքան լուռ է մնում: Կար մի եղբայր, որն երեք օր շարունակ նեղում էր արքա Թէոդորոս Փերմացուն՝ նրանից «hrema» ստանալու համար, բայց ծերը մի բառ անգամ չգիշտէ: Երբ անհանգստացնողը մեկնեց, արքան իր վարմունքի պատճառը բացատրեց իր հետ բնակուող աշակերտին. «Անշուշտ թէ ոչինչ չասացի: Մէկն է, որ մեծ կարեւորութիւն է տալիս իր անձին եւ սիրում է պարծենալ ուրիշների խօսքերով»: Անօգուտ է սեփական հոգեւոր բարիքից տարբեր մի շահ փնտռել Հայրերի խօսքերում. դա նշանակում է արժէքազրկել խօսքը:

Իսկ եթէ հարցեր ներկայացնողի դիտաւորութիւնը իսկապէս Աստուծոյ կամքի ճանաչումն է, յայնժամ Աստուած Ինքը կը պարգեւի նրան մի հայր, կարեւոր չէ՝ թէ ուր կամ ինչպէս, լինի նոյնիսկ ամենամասնաւոր ձեւով: Ահա թէ ինչ է յանձնարարում Դորոթէոս Գազացին մի եղբոր, որը դժգոհում էր՝ թէ չէր կարողանում մի իրական հոգեւոր հայր գտնել. «Իրականում, Աստուած երբեք չի լքում նրան՝ ով իր ամբողջ սրտով իսկապէս փափաքում է իր կամքը, այլ միշտ առաջնորդում է նրան իր կամքի համաձայն: Այո՛, իրօք, եթէ մէկն իսկապէս իր սիրտը ուղղում է դէպի Աստուծոյ կամքը, Աստուած լոյսեր է պարգեւում մինչեւ իսկ մի մանկան, որպէսզի հաղորդի նրան իր կամքը: Իսկ եթէ մէկն անկեղծօրէն չի փափաքում Աստուծոյ կամքը, նոյնիսկ եթէ գնար մարգարէների մօտ, Աստուած մարգարէների շրթունքների վրայ կը դնէր խօսքեր, համապատասխան՝ նրա սրտի չարութեանը»:

Սա նման է ասելուն, որ հոգեւոր հայրութեան պարգեւաշնորհը բնակում է այնքան որդու՝ որքան հօր սրտում: Եթէ կը հասնի մի ժամանակ, երբ Հայրերն այլեւս չեն ունենայ հաղորդելիք խօսքեր, դա կը նշանակի՝ որ բացակայում են այդ խօսքերը որդիական տրամադրուածութեամբ ընդունող սրտերը: Արքային հարցեր ներկայացնող որդին, ուրեմն, Աստուծոյ պէտք է խնդրի լուսաւորել հօրը եւ կանխաւ արդէն պարտաւոր է յանձնուել Աստուծոյ խօսքին, որն իրեն կը հասնի արքայի կողմից տրուած պատասխանի միջոցով: «Եթէ գնում ես հայրերից մէկի մօտ, մտածումներիդ վերաբերեալ հարցեր տալու համար, նախ աղօթիր Աստուծուն այս խօսքերով. ”Տէր, արքայի շրթունքներին դիր այն՝ ինչ կամենում ես, որպէսզի յայտնի ինձ: Իրենից լսածը ես կ'ընդունեմ այնպէս՝ ինչպէս եթէ ուղղակի քեզնից բխէր: Հաստատիր նրան, ո՛վ Տէր, ճշմարտութեանդ մէջ, որպէսզի իր միջոցով ես ճանաչեմ ճշմարտութիւնդ”: Եւ այսպէս, ուշադրութեամբ եւ երկիւղով պահպանիր այն՝ ինչ ասում է քեզ Հայրը»:

Բայց այս ամէնից մեկնելով, պատասխաններ տալու գործում՝ արքայի պատասխանատուութիւնը չի թեթեւանում: Արտասանուելիք խօսքի ծանրութեան ներքոյ, կքուած է սեփական տկարութեան ու անարժանութեան գիտակցութեամբ, քաջ իմանալով՝ որ իր քմահաճոյքի համաձայն չի կարող մատակարարել խօսքը: Սա՛ է հաստատում Յովհաննէսի պատասխաններից մէկը, տրուած մի եղբոր՝ որն անդադար պնդում էր եւ փափաքում էր մի խօսք լսել նրանից. «Եւս մի անգամ գրում ես ինձ, ինձ՝ որ այսքան անզգայ եմ ու տգէտ ... : Կ'ասեմ քեզ, հետեւաբար, ճշմարտութիւնը. ես ոչինչ եմ եւ ոչինչ չգիտեմ, բայց յանուն հնազանդութեան, այն՝ ինչ ունեմ սրտիս մէջ, հաղորդում եմ քեզ: Ձեմ յաւակնում, անշուշտ, թէ ասածներս համապատասխանում են իրականութեանը, այնուամենայնիւ այն՝ ինչ ունեմ, ասում եմ ... թէեւ այսքա՛ն անարժան եմ»:

Հայրերի խօսքերն այս աշխարհի մեծերին կամ իմաստուններին ապշեցնելու համար չեն. կոշտ են ու անշարժ, ուշադրութիւն չեն դարձնում իրենց արտաքին բանաձեւմանը: Մի ազնուական անձնաւորութեան, որն եկել էր իրեն այցելելու, Թէոդորոս Փերմացին ընդառաջ է ելնում առանց այլեւայլ ձեւականութիւնների, «բզկտուած քուրճեր հագած, կուրծքը բաց, կնգուղը երեսին քաշած»: Իսկ երբ աշակերտը նրան յանդիմանում է

վայելչութեան պակասի համար, ծերը պատասխանում է. «Մի՞թէ պէտք է մարդկանց ծառայենք: Վարուեցի այնպէս՝ ինչպէս պատշաճ էր: Բայց այլեւս անցած բան է. ով ուզում է իր հոգուն նպաստել, թող նպաստի. ով ուզում է գայթակղուել, թող գայթակղուի: Ես իմ մօտ եկողներին ընդունում եմ այնպէս՝ ինչպէս որ եմ»: Նշանակում է, որ Հայրերի խօսքը կարիքը չունի մարդկային գնահատանքի ու որակաւորման. Հայրերի խօսքն արժէքաւոր է ինքնըստինքեան:

Այսքան յստակ ու անմիջական լինելով, Հայրերի խօսքը նպաստում է իր կարճութեամբ եւ կարիքն ունի տեւելու նոյնքան իմաստալի լուծեան մէջ, որովհետեւ իսկապէս հոգեշահ խօսքը բաւական է ինքն իրեն: Կարիքը չունի յաւելեալ բացատրութիւնների. կը խեղդուէր խօսքերի առատութեան մէջ: Այսպէս, երբ յաճախում էր եկեղեցի, արբա Ամոնէն չէր թոյլատրում իր աշակերտին քայլել իր կողքին, այլ՝ որոշ հեռաւորութեան վրայ: «Եթէ աշակերտը մօտենում էր իր մտածումների մասին հարցնելու, ... իսկոյն հեռացնում էր նրան, ասելով. "Թող չպատահի, որ մինչ խօսում ենք հոգու համար օգտակար բաների մասին՝ ներս խցկուի օտար մի խօսք"»:

Հօր եւ որդու միջեւ դժուարին ու ինքնամերժ, բայց միաժամանակ՝ հաւատքով լի այսպիսի հաղորդակցութեան ներսում է, որ բխում է փրկարար խօսքը: Երկխօսութեան մասնակիցներից իւրաքանչիւրը ներդնում է ինքնամերժման իր բաժինը, իւրաքանչիւրն իր մակարդակի համաձայն: Մէկը միւսի կարիքն ունի, որպէսզի իրազարձութիւնը տեղի ունենայ: Անտոնը իր աշակերտներին տրուած խրատներից մէկը եզրափակում է՝ ներկայացնելով հոգեւոր իրական երկխօսութեան բանաձեւը. «Գեղեցիկ է փոխադարձաբար միմեանց քաջալերելը հաւատքի մարզում եւ խօսքերով միմեանց խրախուսելը: Դուք, ուրեմն, որպէս որդիներ, ներկայացրէք հօրը այն՝ ինչ գիտէք եւ ասացէք ինձ. ես, որ տարիքով ձեզնից աւելի մեծ եմ, կը յայտնեմ ձեզ այն՝ ինչ գիտեմ ես եւ ինչ որ սովորել եմ փորձառութիւնից»: Քանի որ ինչպէս մէկ՝ այնպէս էլ միւս կողմից վերցւում եւ տրւում է, կարելի է հասկանալ Ամոնի խօսքը, ուղղուած՝ աշակերտների խմբերից մէկին. «Այնտեղ՝ ուր Հայրերն ընդունում են իրենց որդիներին, ներկայ է Աստուած, մէկ եւ միւս կողմից»: Խօսքը, որ հօր եւ որդիների միջեւ կիսւում է եղբայրական բերկրանքով, կարող է գալ միմիայն Աստուծոյ:

Գառնալ հայր

Հայրերի շրթունքների միջով, հետեւաբար, Աստուծոյ խօսքը շարունակում է հնչել նրանց ականջներում՝ ովքեր շարունակում են խնդրել այն: Երիտասարդ մէկի կողմից առաւել տարեց մէկին հարցեր ուղղելը՝ անապատի հիմնական սովորութիւններից մէկն էր: Դորոթէոս Գազացին մեզ է աւանդել մի խօսք, որն անտիպ մի ձեռագրում վերագրուած է մեծն Պիմէնին. «Հայրերն ուսուցանում են, որ վանական կեանքի կէսը կայանում է խոցից ներս մնալու, իսկ միւս կէսը՝ Հայրերին այցելելու մէջ»: Սա՛ է գաղտնի հպարտութեան կողմից սնուցուած ինքնախաբէտութեան բոլոր ձեւերի դէմ անհրաժեշտ ապահովութիւնը: Այս պատճառով է, որ Անտոնը եւ նրանից հետ շատ ուրիշներ յիշեցնում են Աստուածաշնչի տողերից մէկը, վերցնում՝ իմաստասիրական գրքերից. «Բազում վանականներ տեսայ, որ շատ ու շատ ճգնութիւններից յետոյ ընկնում էին եւ խելքները կորցնում, որովհետեւ վստահում էին իրենց գործերին եւ ուշադրութիւն չէին դարձնում այն պատուիրանին, որն ասում է. "Հարցրու հօրիցդ եւ նա քեզ կ'աւետի"» (ԶՕր 32, 7; Հմմտ. նաեւ Առկ 4, 1 ...):

Բայց ինչպէ՞ս գտնել Աստուծոյ համաձայն իրական մի հայր, եւ ինչպէ՞ս մի օր հայր դառնալ եղբայրների համար: Արդէն տեսանք՝ թէ ինչպիսիք պէտք է լինեն հոգեւոր հայր փնտռող մէկի տրամադրութիւնները. Աստուծոյ կամքը ճանաչելու անկեղծ փափաքը, միացած՝ անջատմանն այն ամէնից՝ որ չափազանց անձնական է: Այս իսկ պատճառով, որպէս հայր ընտրուածը պէտք է խոստափի աշակերտի ցանկութիւնները սանձազերծ թողնելուց: Անանուն ապոֆտէզմաների ժողովածոն պահպանել է պատմութիւնը մի երիտասարդի, որն այսպէս է դիմում ծերերից մէկին. «Հայր, կամենում եմ ուղածիս պէս

ծեր գտնել եւ մեռնել իր հետ»: Ծերը նախ ձեւացնում է՝ թէ համաձայն է, բայց խսկոյն հասկացնում է՝ որ ունայն ու մակերեսային կը լինէր այն խաղաղութիւնը, որը երիտասարդը կը կարողանար գտնել այդպէս վարուելով. «Մի՞թէ փափաքում ես խաղաղութիւն գտնել յաւակնելով՝ որ ծերը հետեւի քո կամքին, քան թէ դու հետեւես իր կամքին»:

Սովորաբար, Հայրերը չէին թողնում՝ որ իրենց առջեւ այսպիսի կոպիտ որոգայթներ լարէին. ենթադրուում էր, յիշուում, որ Հայրն ինքը փորձառու պէտք է լինէր հնազանդութեան գործում: Յովհաննէս Քասսիանոսի համաձայն, սա բացարձակ կերպով անզանցառնելի պայման է: Գաղղիայի վանականութեանը, որի համար է պատմում դէպի Միջին Արեւելք կատարած իր վանական ճամփորդութեան յուշերը, Քասսիանոսը յանդիմանում է բազմաքանակութիւնը երիտասարդ անփորձ վանահայրերի, որոնք պաշտօնի են անցնում՝ առանց նախ իրենք իրենց թրծելու՝ մինչեւ խորքը ապրելով աշակերտի մասը. «Առանց ծերերի ուսուցումների փորձառութիւնն ունենալու, յամարձակում ենք նախագահել վանքերում եւ, աշակերտ լինելուց առաջ՝ ինքներս մեզ արբա նկատելով, սահմանում ենք այն՝ ինչ թուում է մեզ եւ ինչ հաճելի է մեզ, աւելի յակուած՝ պահանջելու մեր յորինուածքների պահպանումը՝ քան նմանողութիւնը ծերերի փորձառու ուսուցումներին»:

Որպէս Հայր ներկայացող անձի անփորձառութիւնը հասցնում է մինչ այդ հաւատարմօրէն աւանդուած կենցաղավարական կանոնների կործանմանը: Բայց փորձառութեան անհրաժեշտութիւնը դե՛ռ աւելի ուժգին կերպով զգացւում է հոգեւոր ասպարէզում: Միեւնոյն Քասսիանոսը ընդգծում է, որ մէկը կարող է ուրիշներին նոյնպէս փոխանցել հոգեւոր գիտութիւնը միմիայն այն չափով՝ որքանով որ սովորել է ինքը, ո՛չ թէ լուրջ ընթերցանութեամբ կամ քննութեամբ, այլ՝ «փորձառութեան քրտինքով»:

Փորձառութիւնը, որի մասին խօսում ենք, չի վերաբերւում միայն գերբնական շնորհներին: Այս փորձառութիւնը նախեւառաջ կայանում է փորձութիւնների ու նեղութիւնների հետ ընտանութիւն ունենալու մէջ: Մի Հայր, որ նախապէս ինքը չի անցել մաքրարար այս կրակի միջով, շատ դիւրաւ կարող է մղել իր աշակերտներին դէպի յուսահատութիւն: Աւելին, ուղղակի անընդունակ կը լինէր հասկանալու իրեն ուղղուած հարցերը. «Այն՝ ինչ խնդրում ես ինձնից», գրում է Բարսանուֆը մէկին՝ որը նամակագրական կապ էր պահպանում իր հետ, «ոչ ոք կարող է հասկանալ, եթէ ոչ միայն նա՝ որ հասել է հասկացողութեան այս աստիճանին: Ողջ մարդը զգում է տաքն ու սառը, երբ հպւում է առարկաներին, բայց նա՝ որ մեռած է, չի զգում, որովհետեւ կորցրել է զգալու կարողութիւնը: Նոյնն է՝ ինչ տեղի է ունենում տառերի իմացութեան պարագային. եթէ մէկը տառերը սովորում է՝ մինչեւ որ հասնում է կատարեալ ճանաչողութեանը, յայնժամ կարողանում է զանազանել դրանք, մինչ եթէ մէկը չի սովորել եւ ջանք չի գործադրել, չի կարող իմանալ նրանց իմաստը, նոյնիսկ եթէ բացատրութիւններ խնդրի եւ հազարաւոր անգամներ լսի՝ թէ ինչ են տառերը: Նոյնն է նաեւ այստեղ. կարող ես ուզածիդ չափ խօսել որեւէ մէկի հետ. ամբողջովին ապարդիւն է, եթէ չունի փորձառութեան համը»:

Այնուամենայնիւ, իւրաքանչիւր փորձառու վանական կանչուած չէ սեփական փորձառութիւնը ուրիշ եղբայրների աւանդելու: Հնագոյն գրութիւնները ենթադրում են ուղղակի մի միջամտութիւն, որ յայտնի Աստոյ կամքը նոր արքայի վերաբերեալ: Ամենայայտնի օրինակը, թերեւս, արքա Ջաքարիայինն է: Նրան ընծայուած առաջին երեք ապոֆտէգմաններն ակնարկում են նման մի դէպքի, որը թեթեւօրէն ընդլայնուած վիճակով գտնում ենք եթովպական ժողովածոյում: Արքա Մովսէսը հարցեր է ուղղում երիտասարդ Ջաքարիային, երբ վերջինս տակաւին իր աշակերտն էր (որոշ ձեռագրերում, Մովսէսի փոխարէն յիշուում է Մակարը): Ջաքարիան հարցնում է պատճառը (ձեռագրերը ներկայացնում են զանազան պատասխաններ, որոնք սակայն հապէս նոյնն են): Տակաւին իր աշակերտը եղող վանականին հարցեր ուղղողը վարւում է այդպէս՝ որովհետեւ իրեն մղուած է զգում մի ներքին ուժի կողմից. «Լիակատար վստահութիւն ունեմ քո նկատմամբ, որդեակ իմ Ջաքարիա, ինչ որ մէկը մղում է ինձ քեզնից հարցնելու»: Կամ աւելի լաւ. «Հաւատա՛, որդեակ իմ Ջաքարիա, տեսայ Սուրբ Հոգին՝ որ իջնում էր վրադ. ահա սրա համար եմ հարցնում քեզնից»: Այս պատասխանը հաստատուում է հետեւեալ

ապոֆտէգմայի կողմից. «Մի օր արքա Մովսէսը եկաւ ջրհորից ջուր հանելու եւ տեսաւ արքա Զաքարիային, որն աղօթում էր ջրհորի մօտ եւ Սուրբ Հոգին հանգչում էր նրա վրայ»:

Ուրիշ պարագաներում, մինչդեռ, իրական Հայրերին բացայայտողը լինում է խօսքը. «Իր շրթունքներն արժանացան հայր կոչուելուն», ասում էր Պիմէնը մի տակաւին երիտասարդ վանականի մասին: Կամ, է՛լ աւելի աղմուկ հանող ձեւով, կատարում էր մի հրաշք, որը բացայայտում էր մինչ այդ արհամարհանքի առարկայ եղած եղբօր հոգեւոր որակը: Պարագան է այն վանականի, որն «իր վրայ էր վերցնում եղբայրների կողմից գործուած բոլոր մեղքերը, այն աստիճան՝ որ ինքն իրեն մեղադրում էր նաեւ պոռնիկութեան մէջ»: Բայց հակառակ միւս եղբայրների բամբասանքներին, իր ձեռքերի գործը հրաշքով ազատում է հրեհհից, մինչ կրակը ոչնչացնում է միւսներին: «Այս տեսնելով», շարունակում է ապոֆտէգման, «եղբայրները երկնչեցին, մինչեւ գետին խոնարհուեցին եղբօր առաջ եւ այդուհետեւ որպէս հայր նկատեցին նրան»:

Բայց այս բոլորից առաւել նշանակալին որդու համբերատար յարատեւութիւնն է փորձութիւնների մէջ, որ լիակատար հաւաստիութիւն է շնորհում արքայի կողմից նրա վերաբերեալ արտասանուած խօսքին: Այսպիսին էր պարագան Յովսէփ Աֆրամէթցու, որն իր արքայի կողմից ուղարկուել էր ամբողջական մենութեան մէջ քառասուն օր ճգնելու, որովհետեւ ընկել էր ողջախոհութեան դէմ ուժգին փորձութիւնների մէջ: Երբ վերադառնում է, ամբողջովին խաղաղուած եւ ուրախ, արքան մի քանի անգամ համբուրում է նրա շրթունքներն ու ճակատը, ապա ասում է. «Ահա, այսօր դարձար իմ որդին»:

Հարկ է աւելացնել, որ արքաներից ոչ մէկը չի փափաքել արքա լինել: Աւելին, իրական սարսափի զգացումներ էին ապրում, երբ իրենց ուղղում էր նմանօրինակ մի հրաւէր: Կրկին արքա Զաքարիայի պարագան է, որին հազիւ թէ արքա Մովսէսը ուղղում է առաջին հոգեւոր հարցը, «երեսն ի վար փռուեց գետնին եւ դէմքը հողին խփեց, փոշի ցանեց գլխի վրայ եւ արցունքներ հեղեց», որոնք բոլորն էլ մեծապէս արտայայտիչ նշաններն են ողբի ու տրտմութեան:

Բացայայտել մտածումները

Այժմ պէտք է է՛լ աւելի խորանանք այս հաղորդակցութեան քննութեան մէջ, մի հաղորդակցութիւն՝ որ գրեթէ միշտ որպէս մեկնման կէտ ունի փրկութեանը վերաբերող հարցը, ուղղուած՝ աշակերտից արքային:

Խնդրանքի առարկան միայն բացառիկ դէպքերում է ներկայանում որպէս վերացական կամ աստուածաբանական. սա շատ հազուադէպ է պատահում, եւ միայն այն դէպքում, երբ վտանգի մէջ է հաւատքի ուղղափառութիւնը: Արքա Յովսէփը խոստովանում է իր տգիտութիւնը, երբ իր առջեւ են դնում Աստուածաշնչի դժուար մեկնաբանելի հատուածներից մէկը: Նոյն կերպ է վարում արքա Արսէնը: Արքա Պիմէնը խորհուրդ է տալիս չխօսել Աստուածաշնչի մասին. նախընտրելի է խօսել ծերերի խօսքերով: Այս մէջբերումները ցոյց են տալիս՝ թէ Հայրերը որքա՛ն զգոյշ էին այդ ասպարէզում արկածախնդրութիւնների մեկնելուց: Ահա թէ ինչ կանոն էր սահմանել Պիմէնը ինքն իր համար. եթէ մէկը սկսում էր Աստուածաշնչի մասին խօսել, դէմքը միւս կողմ էր դարձնում եւ լռում էր: Աշակերտների գործն էր զարմացած այցելուին բացատրելը. «Արքան հեշտօրէն չի խօսում Աստուածաշնչի մասին, բայց եթէ մէկը խօսում է հոգու կրքերի մասին, պատասխանում է»:

Հոգեւոր երկխօսութեան նախընտրեալ առարկան, ուրեմն, հոգու կրքերը կամ հիւանդութիւններն են, որոնք պէտք է դիմակազերծուեն ու բժշկուեն Հայրերի խօսքով: Այն չափով՝ որով կրքերը գիտակցութեանը ներկայանում են որպէս ցանկութիւններ, կոչում են նաեւ «loghismoi» (մտածումներ) եւ կամ «thelemata» (կամք-ցանկութիւններ):

Եղբայրներից մէկն ամաչում էր իր արքային յայտնել իր տգեղ մտածումները, բայց բարեբախտաբար՝ արքայի անունը Պիմէն էր: Եղբայրը փորձում է մի քանի անգամ, բայց

չի կարողանում. «վերադարձաւ առանց որեւէ մի բան յայտնելու արքային»: Աշակերտի անորոշ վիճակից, սակայն, Պիմէնը հասկանում է ամէն բան. այնուամենայնիւ, շարունակում է քաջալերել նրան կիսուելու, տալով բարի խորհուրդներ: «Սատանան, տեսնելով՝ որ բացայայտուեց իր խարդախութիւնը, հեռացաւ նրանից Քրիստոսի շնորհով»:

Մտածումները յայտնելու նպատակներից մէկն այն է, որ ջրի երես դուրս գան այն բոլոր ձգտումները՝ որ թաքնուած են սրտի խորքում եւ որ մեծ վնասներ են հասցնում ճիշտ այն չափով որքանով որ չեն կիսուում որեւէ մէկի հետ: Լոյսի տակ դնելով, մինչդեռ, յաճախ անէանում են ինքնաբերաբար:

Խօսքը չի վերաբերում, հետեւաբար, գործնական կերպով գործուած յանցանքների խոստովանութեանը: Անիմաստ է ակնյայտ մեղքի շուրջ հարցեր տալը. «Իր հոգու ստացած վնասը տեսնող մարդը պէտք չունի հարցեր տալու: Ծածուկ մտածումների մասին է հարկաւոր հարցնելը, եւ ծերերի գործն է որակաւորելը: Իսկ ինչ վերաբերում է բացայայտ մեղքերին, կարեւոր չէ հարցնելը, հարկաւոր է իսկոյն արմատախիլ անելը», ասում է Պիմէնը:

Միտքը կամ «loghismos»ը այստեղ հարկ է հասկանալ գործելու մղող մտածումի իմաստով: Խօսքը չի վերաբերում այն բոլոր գաղափարներին, որոնք ներկայանում են մտքին ու երեւակայութեանը, այլ աւելի այն մտածութեանը՝ որ լի է զգացմունքային արժէքներով, որ գրգռում եւ ստանում է սրտի համաձայնութիւնն ու ուշադրութիւնը: Աշակերտներից մէկի կողմից նամակով իրեն ուղղուած հարցերից մէկին՝ արքա Յովհաննէսը պատասխանում է այսպէս. «Հարկաւոր չէ սրտում ծնունդ բոլոր մտածումների մասին հարցնելը, որովհետեւ կան նաեւ վաղանցուկ մտածումներ: Հարկաւոր է, մինչդեռ, հարցնել այն մտածումների մասին՝ որոնք տեւում են եւ պատերազմներ են առաջացնում մարդու ներաշխարհում»:

Նմանապէս, հարկաւոր չէ ամէն անգամ իսկոյն հոգեւոր հօր մօտ վազելը. Աստուած կարող է ուղղակի կերպով լուսաւորել: Բարսանուֆը տալիս է նաեւ կշռադատելու մի փոքրիկ չափանիշ, որի օգնութեամբ ինքնուրոյն կերպով կարելի է որոշել՝ թէ հարկաւոր է կամ ոչ՝ հոգեւոր հօրը դիմելը. «Երբ մի միտք է ներկայանում քեզ, նրա վերաբերեալ երեք անգամ աղօթիր Աստծուն, խնդրելով չթողնել՝ որ սխալ ճանապարհով քայլես: Եթէ միտքդ անփոփոխ է մնում, յայնժամ արա այն՝ ինչ ներշնչում է քեզ, որովհետեւ գալիս է Աստծուց եւ ոչ թէ քեզնից: Իսկ երբ վստահ չես, հարցրու եղբայրներիցդ»: Ճիշտ է՝ որ այս խորհուրդը ուղղուած է աշխարհական մէկին. կարող ենք հարցնել ինքներս մեզ՝ թէ արդեօք վաւերակա՞ն է նաեւ վանականների համար, քանի որ վերջիններս շարունակ հրաւիրուած են պարբերաբար խնդրելու հոգեւոր հօր կշռադատ կարծիքը: Աւելի են ճգնութիւնները դառնում նուրբ կամ բացառիկ, աւելի վտանգաւոր են եւ պահանջում են ծերերի խորհուրդը: Սա յատկապէս այն դէպքում, երբ խօսքը վերաբերում է մենակեցական փափաքներին. «Եղբայրներից մէկը անապատում տեսաւ առանձնացած խաղաղ մի վայր եւ աղաչում էր իր հօրը՝ ասելով. "Թոյլատրիր ինձ բնակուել այնտեղ եւ յուսով եմ՝ որ Աստծոյ շնորհով եւ քո աղօթքներով կը դիմադրեմ մեծ յոգնութիւնների": Բայց արքան թոյլ չտուեց, ասելով. "Գիտեմ՝ որ կամենում ես շատ ճգնել, բայց քո կողքին ծեր մէկը չունենալու պատճառով կը սկսես վստահել քո գործերին, կը համոզուես՝ թէ իբր հաճելի են Աստծուն, եւ ճիշտ վանական գործը հաւատարիմ կատարելու այս համոզմանդ հետեւանքով կը կորցնես յոգնութիւններդ եւ հոգիդ"»: Նոյնը ասել էր արդէն Անտոնը. «Կան ոմանք՝ որ ճգնութիւններով նահատակութեան են ենթարկում իրենց մարմինները, բայց քանի որ պակասում է նրանց մէջ կշռադատութիւնը, հեռանում են Աստծուց»:

Կշռադատութիւնը վանականի համար անհրաժեշտ յատկութիւն է նաեւ ամենախոնարհ իրողութիւններում: Ահա թէ ինչ է ասում նորից մեծն Անտոնը. «Երբ հնարաւոր է, վանականը պէտք է Հայրերին յանձնուի նաեւ իր խուցի մէջ կատարած քայլերի եւ խմած ջրի կաթիլների թուր վերաբերեալ, եթէ չի կամենում սխալուել սրանց մէջ»:

Սատանայի հնարամտութիւնն ու խորամանկութիւնը խցկւում են ամէնուր, ինչպէս ջուրն է կարողանում նաւի մէջ մտնել նաեւ ամենափոքր ճեղքերի միջով, այնքան՝ որ վերջիվերջոյ ընկղմում է նաւը: Հոգեւոր հայրը, ուրեմն, պէտք է լինի արթուն եւ հսկող միտք ունեցող նաւապետի նման, յանձնարարում է մեծն Մակարը, որը մեր

ուշադրութիւնը հրաւիրում է հետեւեալ պատկերի վրայ. «Նաւաստին երբէք չի դադարում նաւի համար մտահոգուել, այլ շարունակ քննում է միացման կէտերը, տեսնելու համար՝ թէ որն է ջուր անցկացնում ... : Նոյն կերպ պէտք է վարուի նաեւ նա՝ որ հայր է եղբայրների համար, անդադար քննելով նրանց մէջ ներկայ կրքերը եւ սատանայից ներշնչուած չար մտքերը, տեսնելու համար՝ թէ որն է ... չար ջուրը անցկացնում նրանց հոգիների մէջ, երկիւղով ... վտանգի մատնուելու եւ Աստծոյ ներկայութեանը մեղադրուելու՝ անհոգութեան մատնած լինելու համար իր հետ եղող եղբայրների գործերը եւ թողած լինելու համար՝ որ ծովը նրանց կլանի»:

Այստեղ կարելի է ամբողջութեամբ մէջբերել մի երկար եւ գեղեցիկ ապոֆտէգմա, որը պատմում է Թէբայիդի վանականներից մէկի մասին, որն «ապրում էր խստագոյն ճգնութիւններով եւ կեանքի բարձր վարքով: Նուիրւում էր շարունակական հսկումների ու անդադար աղօթքների, ապրում էր բացարձակ աղքատութեան եւ յարատեւում էր ծոմապահութեան մէջ»: Երկար ժամանակ դառնում է սատանաների ծաղրի առարկան, այն աստիճան՝ որ մի օր հասնում է Աստուծոյ խնդրելով՝ պարգեւել իրեն հրաշքներ գործելու կարողութիւնը: Բայց Աստուած ներշնչում է նրան ենթարկել իր այդ փափաքը մի սուրբ միայնակեացի դատաստանին: Մեր ճգնաւորը վերջիվերջոյ համաձայնում է ներշնչմանը եւ գնում է, ուրիշների նման, ծերունու առջեւ դնելու արարողական դարձած հարցումը. «Խորհուրդներ տուր ինձ փրկութեան ճանապարհի վերաբերեալ»: Սուրբ ծերը, իմանալով թէ ում հետ է գործը, իսկոյն առաքում է նրան քաղաք, պատուիրելով՝ կերակուրների առատ գնումներ կատարել: Մեր ծոմապահը այն աստիճան շփոթուած է մնում, որ չի համարձակում ինքը կատարել այդ գնումները, այլ ուղարկում է իրեն ծանօթ աշխարհականներից մէկին, վախենալով կորցնել իր համբաւը: Երբ ծերունու մօտ է վերադառնում կերակուրների պաշարով, Սուրբը պատուիրում է նրան մի անսպասելի դիէտա. «Քեզ հետ վերցրու այս կերակուրները, գնա խուցդ, աղօթիր եւ ամէն օր կեր մէկ հաց, մէկ կշիռ գինի եւ մէկ կշիռ միս: Ապա, տասը օր յետոյ, կրկին եկ իմ մօտ»: Ներքուստ ամբողջովին տակնուվրայ եղած, եղբայրը մեկնում է հեծկտալով. այնուամենայնիւ, հնազանդւում է ծերունու պատուէրին: «Եւ Աստուած, հայեացքն ուղղելով նրա խոնարհութեանը, մխիթարեց նրա սիրտը եւ նա հասկացաւ թէ որքան ծոյլ էր դարձել, այն աստիճան՝ որ գործել էր իր դատողութեան համաձայն: Ծնորհակալութիւն յայտնեց Աստծուն, մարդկանց բարեկամին, ասելով. ”Յիրաւի, մարդկային ամէն արդարութիւն նման է կեղտոտ լաթի” (Ես 64, 5): Փրկարար մի դարձ, որը շնորհուեց իրեն՝ հոգեւոր հօր հանդէպ մտային բացուածքի եւ հնազանդութեան փոխարէն:

Հնազանդուելի խօսքին

Մտածումների բացայայտումը համաքայլ է ընթանում հնազանդութեան հետ: Երկու գաղափարները փոխադարձաբար կապուած են միմեանց, մասերն են մէկ միակ իրականութեան, միեւնոյն կենցաղավարութեան կամ, կարելի է ասել, հոգեւոր բուժարուեստի:

Առաջին հանգրուանում, աշակերտը գալիս է իր հոգեւոր հօրը յայտնելու իր գգացումներն ու ձգտումները. բայց յետագայում, հայրական կշռադատութեան խաղաղարար (ո՛չ թէ մտրակարար) լոյսի ներքոյ մոլոր նկատուած ձգտումներից հրաժարուելով է՝ որ ինքը նոյնպէս գտնում է սեփական ներքին ազատութիւնը, մի օր, իր հերթին, կշռադատութեան պարգեւաշնորհը կիրարկելուց առաջ:

Արեւելքում՝ ինչպէս Արեւմուտքում, նորընծայ վանականի ընթացքը անփոփոխ կերպով սկսում է սեփական ցանկութիւններից հրաժարուելու դասով, այսինքն՝ հրաժարուելով այն բոլոր բազմատեսակ ու հակասական ցանկութիւններից, որոնք երբեմն երբեմն, կամ՝ յաճախ, ներկայանում են իր սրտին: «Աբբայի ուսուցումների գլխաւոր մտահոգութիւնն ու նպատակը» (աբբա՝ որին են վստահուած վանքի երիտասարդ նորընծաները), գրում է Քասսիանոսը, «ուսուցում՝ որ ընդունակ կը դարձնի երիտասարդ վանականին յետագայում բարձրանալու մինչեւ կատարելութեան ամենավերին

գագաթները, պէտք է կայանայ նախեւառաջ սեփական կամքից հրաժարումը սովորեցնելու մէջ»: Պաղեստինում, Քասսիանոսին արձագանքում է Դորոթէոս Գազացին, սկսնակների համար գրած իր հրաշալի Հոգեւոր Ուսուցումներում. «Երբ կապում ենք մեր կամքին եւ վստահում ենք մեր յաւակնոտ արդարութեանը, յայնժամ, ճիշտ երբ կարծում ենք՝ թէ ինչ որ մի բարի բան ենք անում, խաբում ենք ինքներս մեզ եւ չենք անդրադառնում անգամ որ կորստեան ենք մատնւում»:

Ակնյայտ է, որ նմանատիպ հնազանդութիւնը ուրիշ բան չէ՝ եթէ ոչ հեռւոր ազգականը այսպէս կոչուած հասարակագիտական հնազանդութեան, որն անհրաժեշտ յատկանիշն է անձի եւ իր պատասխանատուի միջեւ գոյութիւն ունեցող որեւէ յարաբերութեան, մարդկային որեւէ խմբի ներսում: Երբ Հայրերը խօսում են հնազանդութեան մասին, նուազագոյն չափով անգամ չեն հասկանում այն՝ ինչը որ մենք այսօր անուանում ենք խմբի հասարակաց բարիքը: Հայրերի համար, կարեւորը եղբօր միմիայն անձնական բարիքն է, եղբօր՝ որը հոգեւոր հօր հայեացքի ներքոյ ենթարկուում է հնազանդութեան այս վարժութեանը որպէս հոգեւոր իրական բուժարուեստի: Հնազանդութիւնը նախեւառաջ ներքին ազատութեան եւ հոգեւոր հասունութեան ընթացքն է. ճիշտ այս պատճառով է, որ իրաւունքն ունի պահանջող լինելու, երբեմն այն տպաւորութիւնը թողնելով՝ թէ չափազանցում է եւ անցնում սահմաններից այն ամէնի՝ ինչը որ մենք բանական ենք նկատում խմբի ծառայութեան գործում ենթակայի եւ մեծաւորի միջեւ բնական յարաբերութիւններում: Այս չափազանցութիւնը, որ պարզապէս երեւութական է, կարող է հասկացուել միմիայն հոգեբանական եւ հոգեւոր այն ընթացքի լոյսի ներքոյ, որին սկիզբ տալն է իր գործը: Որոշ արտասովոր դէպքեր անյապաղ վիրահատութիւնների բնոյթն ունեն պարզապէս, որ միայն հայրը կարող է թելադրել իր որդուն, ոչ միայն որովհետեւ ուրիշ որեւէ մէկից աւելի լաւ է ճանաչում նրան, այլ յատկապէս՝ որովհետեւ որդին պարզեւել է հօրը իր ամբողջական վստահութիւնը եւ իրեն անչափօրէն ու անմնացօրդ կերպով սիրուած է զգում հօր կողմից – այս հարցին դեռ կ'անդրադառնանք – ինչպէս միմիայն Աստուած կարող է սիրել իր որդիներին:

Հնազանդութիւնը, հետեւաբար, կարող է հասնել որոշ խենթութիւնների: Նոյնիսկ եթէ արբան տուեալ պարագային թւում է անխելք եւ ապուշութեամբ փորձում է որդու համբերութիւնը, կամ եթէ հրամայում է վտանգաւոր բաներ՝ ինչպէս բորենի որսալն ու կապելը, կամ էլ ցաւալի բաներ՝ ինչպէս ձեռքը կրակի վրայ պահելը, աշակերտը պէտք է ջանայ հնազանդուել տրուած հրամանին: Այս վերջին օրինակը, պէտք է հաշուի առնենք, արբայի համար ծառայել էր փորձելու համար հնազանդութիւնը մի եղբօր՝ որը եկել էր յանձնուելու իր հայրութեան շնորհին. «Ընդունիր ինձ որպէս քեզ որդի, որպէսզի քո կողքին մնայով՝ սովորեմ»: Մի ուրիշ դէպքում, աշակերտը վտանգի է ենթարկում մինչեւ իսկ սեփական կեանքը, որովհետեւ միմիայն «մինչեւ մահ հնազանդութիւն» է թոյլատրում ճանաչել իրական վանականին:

Այս ձեւով հնազանդուելը նշանակում է ունենալ Աստծոյ կամքին հասնելու վստահութիւնը: Իրական հնազանդութիւնը ազատում է Աստծոյ պատուիրանները գործադրելու մտահոգութիւնից, որովհետեւ ապահովում է կերպարանակցութիւնը Աստծոյ կամքին. «Եթէ վստահում ենք մէկին եւ յանձնում ենք նրան հնազանդուելու, հարկաւոր չէ մտահոգուել Աստծոյ պատուիրանների մասին: Բաւական է հոգեւոր հօրը յանձնել սեփական բոլոր ցանկութիւնները եւ մարդն անմեղ կը լինի Աստծոյ առաջ, որովհետեւ Աստուած նորընծաներից ուրիշ ոչինչ չի պահանջում՝ եթէ ոչ միայն հնազանդութեան խաչակրութիւնը»:

Երբ հնազանդութիւնն այսպիսով դառնում է միակ կանոնը եւ սեփական կամքից հրաժարումը վստահութեամբ բացայայտում է Աստծոյ կամքը իրադարձութիւնների մէջ, ով հնազանդուում է՝ ազատ է որեւէ տեսակի մտահոգութիւններից: Դառնում է «amerimnos», հանդարտ, առանց մտատանջութիւնների: Ով հոգեւոր հայր ունի, նրան է վստահում այն ամէնը՝ ինչ վերաբերւում է միւս բոլոր մտատանջութիւններին: «Հանդարտ մնա», գրում է Բարսանուֆը. «Եթէ ուզում ես ազատ լինել Աստծոյ համար, ես նոյնպէս կը կրեմ քո հոգսը»:

Հոգեւոր Հօր կողմից տրուած հաւանութիւնը յաճախ նկատուում է որպէս օրհնութիւն: Հօր խօսքը, որով թոյլատրում է որդուն գործել այս կամ այն ուղղութեամբ, իր հետ բերում է նաեւ ասուածը գործադրելու կարողութիւնը. «Ահա այն՝ ինչ պէտք է պահես մինչեւ մահ. ոչինչ չանես, փոքր բան լինի՝ թէ մեծ, առանց քո հետ բնակուող Հոգեւոր Հօր խորհրդի. խուցից դուրս չգաս առանց իր թոյլատրութեան. ջուր չխմես՝ քանի դեռ նա չի աղօթել եւ չուտես՝ քանի դեռ նա խաչի նշանով չի կնքել կերակուրդ. ձեռքդ ուտելիքներին չտանես առանց նախ ասելու. ”Օրհնիր, հայր”։ կաթսայի մէջ ջուր կամ իւղ չդնես առանց նախ նոյնը ասելու: Իսկ գիշերը, քնելու չգնաս առանց նախ նրա առջեւ խոնարհուելու եւ միմեանց ողջունելու»:

Աշակերտի ամբողջ կեանքը կարծես դրոշմուած է Հօր օրհնութեամբ եւ, վերջինիս միջոցով, Աստծոյ զօրութեամբ: Զարմանալի չէ, ուրեմն, որ հնազանդութիւնը հասնում է հրաշքներ գործելու: Ապոֆտէզմաներից մէկը աւանդուել է յստակ նպատակով, եղբայրներից մէկի հնազանդութեանը վերագրելու մի ննջեցեալի յարութիւնը, մինչ եղբայրներից մէկ ուրիշը համոզուած էր՝ թէ այդ շնորհը ընդունել էր իր խստագոյն ճգնութիւնների միջոցով. «Եղբօր հնազանդութեան շնորհիւ է՝ որ ննջեցեալը յարութիւն առաւ»:

Հօր հայեացքի առջեւ սեփական մտածումների յայտնումը նրանում առաջացնում է կշռադատութեան մի խօսք: Այս վերջինն, իր հերթին, պահանջում է կատարեալ հնազանդութեամբ ներշնչուած ընդունելութիւն: Եղբայրը, որն այսպիսով հրաժարուում է անձնական բոլոր ցանկութիւններից, փարուելու համար Հոգեւոր Հօր խօսքից բխող լոյսին, անսխալ կերպով փարուում է Աստծոյ կամքին, որը ներկայ է Հօր խօսքի մէջ: Այսպիսով, աշակերտը մաքրում է անձնական կամքից, ազատում է ցանկութիւնների բռնատիրութիւնից: Զգեստաւորում է Աստծոյ զօրութեամբ, որն իրեն ընդունակ է դարձնում իր հերթին արդիւնաւոր կերպով գործելու եւ ուրիշներին նոյնպէս օգնելու իրենց մտքերի կշռադատման գործում:

Աստծոյ նմանութեամբ. քաղցրութիւն եւ գոյով

Միայն խօսքը բաւական չէ: Խօսքին հաւասար եւ թերեւս խօսքից աւելի՝ Հոգեւոր Հօր կեանքի օրինակն է իր կնիքը թողնում որդու սրտի ու հոգու վրայ: Խօսքը կարող է արտասանել նաեւ սեղանի առաջ սովորած մէկը: Ինչպէս նաեւ կարող է դուռ բացել անհասկացողութիւնների առաջ, եթէ աշակերտը պարզամիտ է ու անփորձ: Օրինակը, մինչդեռ, երբեք չի սխալուում. մի «typos» է (բնօրինակ), որին բաւական է նմանուել՝ ամէնօրեայ կեանքի գործնական մարզում կրթուելու համար:

Հայրերը յաճախ են հաստատում օրինակի անհրաժեշտութիւնը: Պակոմի աշակերտները բարի գործեր կատարելու հօր փափաք էին զգում, երբ լսում էին նրա խօսքերը: Բայց այդ նոյն աշակերտները յիշում են, որ «երբ նա լռում էր՝ իր կեանքն էր խօսում»: Ուրիշների համաձայն, խօսքը միշտ երկդիմի է. միմիայն օրինակն է ձգում: Այս պատասխանն է արքա Սիզոն տալիս եղբայրներից մէկին, որն իրենից մի խօսք էր խնդրում. «Ինչո՞ւ ես ստիպում ինձ ապարդիւն կերպով խօսել: Ահա, արա այն՝ ինչ տեսնում ես»: Բայց դեռ աւելին: Որոշ դէպքերում, աշակերտի կողմից չափազանց կապուածութիւնը Հոգեւոր Հօր խօսքերին դառնում է կասկածելի. «Հայր Սերինոսը իր աշակերտ Իսահակի հետ միասին մի օր գնում է արքա Պիմէնի մօտ եւ հարցնում է. ”Ինչպէ՞ս պէտք է վարուեմ Իսահակի հետ, որն այստեղ ինձ հետ է, քանի որ մեծ յօժարութեամբ է լսում խօսքերս”: Արքա Պիմէնը պատասխանում է. ”Եթէ կամենում ես օգտակար լինել նրան, քո գործերով է՝ որ պէտք է ցոյց տաս առաքիւնութիւնը, որովհետեւ ով կապուած է խօսքերին՝ ոչ մի օգուտ չի քաղում: Իսկ եթէ գործերովդ ես ցոյց տալիս առաքիւնութիւնը, վերջինս թողնում է իր հետքը”»:

Իր Հոգեւոր որդիներից մէկին ուղղուած նամակում, Բարսանուֆը ընդգծում է որդու հայեացքի կարեւորութիւնը, ուղղուած՝ Հոգեւոր Հօր վարմունքին: Այս խորհրդածութեան համար որպէս առիթ ներկայանում է Ծննդոց 30, 37-40 հատուածի պատմութեանը տրուած

հետաքրքրական մեկնություններ: «Հարկաւոր է ուժգին կապուած մնալ սուրբ հայրերին, եւ նրանց օրինակներին, նրանց խօսքերին, նրանց հառաչանքների եւ նրանց գեղեցիկ կեանքի շնորհիւ՝ մենք նոյնպէս կը լիանանք Աստուծոյ համաձայն գղջումով: Իսկապէս, Յակոբի ոչխարները, որ նայում էին աւազանների ջրի մէջ ընկղմուած գաւազաններին, յղանում եւ ծնում էին գաւազանների գոյնով գառներ: Նմանապէս մենք, եթէ մեր հոգիներում դրոշմում ենք նրանց նոյն օրինակները, չենք ուշանայ նրանց քայլած ճանապարհով ընթանալու»:

Հօր կեանքի օրինակից բխում է մի խորհրդաւոր հոսանք, որը նրա խօսքից աւելի զօրաւոր է: «Խօսքերով եւ գործերով սովորեցրու նրանց՝ թէ ինչպէս պէտք է ապրեն», գրում է Դորոթէոս Գազացին իր վանքերի մեծաւորներին, «սովորեցրու յատկապէս գործերով, որովհետեւ օրինակը շատ աւելի արդիւնաւէտ է: Եթէ քեզ համար հնարաւոր է, նրանց համար օրինակ եղիր նաեւ մարմնի յոգնություններում. իսկ եթէ տկար ես, նրանց համար օրինակ եղիր սրտիդ բարութեամբ եւ առաքեալի կողմից թուարկուած Հոգու պտուղներով. սէր, ուրախություն, խաղաղություն, բարեացակամություն, սիրալիություն, բարություն, հաւատարմություն, հեզություն, ինքնատիրապետում բոլոր կրքերի վրայ (Գղտ 5, 22)»:

Առաքինությունները, որ Դորոթէոսը մէջբերում է Պօղոս Առաքեալին հետեւելով, բնորոշ են Նոր Կտակարանին: Հայրերի տուած օրինակի միջոցով, դրանք բոյր են գալիք աշխարհի, ծածուկ՝ բայց հզօր ուժ են, որ վերստին կաղապարում են իրենց յանձնուող սրտերը:

Բոլոր այս առաքինությունները կարող են համառօտուել քաղցրութեան ու ողորմածութեան մէջ, որոնք գործնական երկու արտայայտություններն են սիրոյ, ուղղակի Աստուծոյ նմանություններ: Վանական հին գրականությունը լի է այսպիսի օրինակներով, մէկը միւսից աւելի յուզիչ: Երկայնամտությունը, որ երբեմն մօտենում է տկարութեան չափ բարի լինելուն եւ որ կարելի է հասկանալ եւ արդարացնել միմիայն այն չափով՝ որքանով որ նրանում ուրուագծուած է պատկերը Հօր՝ որ երկնքում է:

Բարսանուֆը յստակ կերպով հաստատում է այս ճշմարտությունը մի եղբօր առաջ, որը վախենում էր անհանգստացնել նրան իր հարցումներով: Մտածեցէք. «Եթէ Աստուած նեղուէր ու ջղայնանար իրեն ուղղուած խնդրանքերի պատճառով, յայնժամ այդպիսին կը լինէին նաեւ Սրբերը»: Մինչդեռ «վերջիններս, երբ իրենց հարցեր են ուղղուած, ուրախանում են, քանի որ կատարեալ են՝ ինչպէս որ կատարեալ է իրենց Հայրը»: Բայց սա ամբողջը չէ. կայ տակաւին լաւագոյն մի բան, որին ի նպաստ վկայում են բազում օրինակներ. ինչպէս Աստուած երկայնամտութեամբ, առանց զայրանալու, համբերում է մարդկանց տկարություններին, նմանապէս հոգեւոր Հայրն է համբերում ու ծածկում որդու զանցառությունները: «Նրանից (Աստուծուց) յետոյ, մինչեւ օրս վրագ տարածեցի թեւերս», գրում է միեւնոյն Բարսանուֆը մի քիչ ցրուած երիտասարդ մի եղբօր, «եւ կրում եմ քո ծանրությունը, եւ մեղքերդ, եւ քեզ ուղղած խօսքերիս հանդէպ արհամարհանքդ, եւ ծուլությունդ: Բայց տեսնելով հանդերձ, ես դրանք ծածկում էի, ինչպէս որ Աստուած է տեսնում եւ ծածկում մեր մեղքերը, ընդունելով քեզ՝ երբ գղջում էիր»:

Յիշարժան օրինակներն անթիւ են, քանի որ երկայնամտությունը եւ քաղցրությունը ամենայստակ նշաններն են Աստուծոյ ներկայութեան: Կարելի էր ամբողջութեամբ մէջբերել այստեղ այն փոքրիկ ցուցմունքագիրը, որ Դորոթէոս Գազացին շարադրել է՝ յիշեցնելու համար մեծաւորներին՝ թէ ինչպէս պէտք է սրբազրեն եղբայրների վարքը: Սէրն առաջին տեղում է միշտ, եւ ոչինչ չպէտք է նուաղեցնի այն, քանի որ «խիստ սիրտը» եւ «ողորմութեան առատությունը» քայլում են միասին. «Մեղքերը տեսնելիս չափազանց մի՛ գայրացիր ... իսկ եթէ պէտք է յանդիմանես, յանդիմանիր պատշաճ դիրքորոշմամբ եւ յարմար ժամանակին: Խստապահանջ մի՛ եղիր թեթեւ մեղքերի առաջ, կարծես թէ գերագոյն դատաւոր լինէիր, անդադար մի՛ յանդիմանիր. իրօք, անտանելի կը դառնաս եւ, ինչը որ աւելի վատ է, շարունակ յանդիմանություններ լսելու սովորությունը ծնում է անզգայություն եւ արհամարհանք ... : Եթէ եղբայրներից մէկը հակաճառում է քեզ եւ դու այդ պահին զայրացած ես, պահպանիր լեզուդ, որեւէ մի բան ջղայնություններ չասելու համար ... : Յիշիր քո իսկ տկարությունը, կարեկցանք ունեցիր եղբօրդ նկատմամբ:

Շնորհակալ եղիր, որ քեզ ներկայանում է ներելու մի առիթ, որպէսզի դու էլ քո հերթին Աստծուց ստանաս ներումը քո մեղքերի, որոնք աւելի շատ են եւ աւելի ծանր»:

Այս ուսուցումը հրաշալի կերպով համառօտում է այն աւանդութիւնը, որն իր արմատները գտնում է Անապատի Հայրերի կեանքում: Յովհաննէս Քասսիանոսը պատմում է օրինակը մի հօր, որն անհնազանդ որդու աներեսութեան առաջ յանդիմանութիւններով չի կայծակնահարում, այլ բաւարարում է սրտի խորքում հառաչելով, լռութեան մէջ ծամելով Փրիլպպեցիս 2, 6-8 հատուածի խօսքերը, ուր ներկայացւում է մահուան չափ հնազանդ Յիսուսը: Մի ուրիշ եղբայր ամէն երեկոյ գնում էր մօտակայ գիւղը՝ գիշերը մի կնոջ մօտ անցկացնելու. բոլորը տեղեակ էին իրավիճակին, բայց այդ եղբօր հոգեւոր հայրը չէր յանդիմանում նրան, հակառակ միւս աշակերտների շարունակական մռթմռթոցի, որոնք չէին կարողանում հասկանալ ա՛յս աստիճան գայթակղեցուցիչ երկայնամտութեան իմաստը: Միայն աւելի ուշ՝ ծերը միջամտում է, գործածելով յատուկ կերպով յարմար մի առիթ, եւ այս միջամտութիւնը որպէս անմիջական արդիւնք ունենում է մեղաւոր եղբօր դարձը: Ովքեր գալիս են բացատրութիւններ խնդրելու՝ յանդիմանութեան անսովոր յետաձգման մասին, ծերը պատասխանում է. «Տեսնում էի՝ թէ ինչպէս էր սատանան բռնում եղբօր մի ձեռքից եւ քաշում նրան դէպի աշխարհ. իսկ ես, իմ համբերութեամբ, պինդ բռնում էի նրա միւս ձեռքից, վախենալով՝ որ յանդիմանութեամբ ստորացուելով՝ իսկոյն կը փախչէր աշխարհ, դէպի ուր քաշում էր նրան սատանան: Մինչդեռ երբ Աստուած յարմար գտաւ փրկել իր արարածը, յայնժամ բռնեցինք նաեւ միւս ձեռքը եւ նրան ամբողջովին, ողջ ու առողջ»:

Այսպիսով, հոգեւոր հայրը գազանօրէն չի ընդդիմանում մեղքին: Իր անմիջական հակազդեցութիւնները նոյն ինքն Աստծոյ հակազդեցութիւններն են. վիշտ, անշուշտ, բայց նախեւառաջ համբերութիւն եւ ողորմութիւն, որ հասնում են յանդիմանութիւնը քաղաքավարութեամբ կատարելու խոհեմութեանը, անուղղակի ճանապարհներով, այնպէս՝ որ եղբայրը չվիրաւորուի:

Հոգեւոր հօր վերաբերմունքը չի փոխւում նոյնիսկ երբ ինքն է դատի կանչւում կամ իր իսկ խօսքերն է՝ որ ոտնակոխ են արւում: Այսպիսին էր արքա Ռոմանոսը, որը մահուան պահին յիշում է՝ որ եղբայրներից ոչ մէկին երբեք էր ոչինչ չի հրամայել առանց նախ որոշելու չգայրանալ՝ եթէ չկատարուէր իր կողմից պատուիրուածը: Յայտնի է նաեւ պատմութիւնը այն հոգեւոր հօր, որն այսպէս ասած ընկերանում էր որդուն մեղքի մէջ, ասելով՝ թէ ինքը նոյնպէս ենթարկւում էր միեւնոյն փորձութիւններին, միշտ միեւնոյն նպատակով. աշակերտին մեղքից խորագիտութեամբ հեռացնելու:

Այս ներողամտութիւնը, սակայն, երբեք տկարութիւն չէ: Մեղքի առաջ զէնքերը վար դնել չէ, ո՛չ էլ մեղսակցութիւն յանցաւորի հետ: Ապոֆտէզմաներից մէկը, որ պահպանուել է դատի մի ժողովածոյում, մէկ միակ պատկերի մէջ միաւորում է կրկնակի պահանջը խստութեան եւ քաղցրութեան: Խօսքը պատկանում է մեծն Մակարին: Անհնարին է, հաստատում է նա, «հոգեւոր զաւակներ ծնել, ինչպէս Եղիան ծնեց Եղիսէին, եւ ինչպէս Պօղոսը ծնեց Տիմոթէոսին ու Օնէզիմոսին», եթէ հայրը չի ապրում «քաղցրութեամբ ու անուշութեամբ»: Նախ ինքը, յերաւի, պէտք է իր մարմնում կրի «իրական Հովուի, ճշմարիտ Ուսուցչի պատկերն ու նմանութիւնը, նրա՝ որ թոյլատրեց՝ որ իր մարմնում դրոշմուէին հետքերը հարուածների, գամերի ու գեղարդի ... : Եւ այս ամէնը նա կրեց իր իսկ կամքով, ծայրագոյն քաղցրութեամբ»: Նմանապէս նաեւ աշակերտը, հօր նմանութեամբ ճշմարիտ որդի լինելու համար, պարտաւոր է «վարժապետի եւ վանահօր ձեռքի մատների հետքը կրի այտի վրայ ... մեծ համբերութեամբ, առանց տրտնջալու»: Որդու երեսի վրայի հետքերը – եթէ ճիշտ ենք մեկնաբանում – ուրիշ բան չեն կարող լինել՝ եթէ ոչ միայն հետքերը հօր ձեռքով հասցուած ապտակի, որն այնուամենայնիւ չի նուաստացնում Աստծոյ հայրութեան պատկերը, եթէ պտուղն է ճշմարիտ սիրոյ:

Ընկերություն

Մինչ այժմ ասուածները իրենց ամբողջական իմաստն ու նշանակութիւնը գտնում են այս սիրոյ լոյսի ներքոյ, որն աղբիւրն է հօր եւ որդու միջեւ գոյութիւն ունեցող հաղորդակցութեան:

Վանական հին գրականութիւնը, գիտենք, կամաւոր կերպով լռում է եղբայրների միջեւ չափազանց արտայայտուած մտերմութեան առջեւ: Այնուամենայնիւ, Բարսանուֆը մի յստակ բացառութիւն է կատարում, երբ խօսում է այն ընկերային յարաբերութեան մասին, որ հոգեւոր հայրը պէտք է ունենայ իր որդու նկատմամբ. «Ա՛յլ բան է հայրերի սէրը իրենց որդիների նկատմամբ եւ ա՛յլ բան է եղբայրների սէրը եղբայրների նկատմամբ: Իրենց որդիների նկատմամբ հոգեւոր հայրերի սիրոյ կշիռը չունի մարմնական կամ վնասակար ոչինչ, քանի որ նրանք ապահով են՝ շնորհիւ իրենց հոգեւոր զգացողութեան. խօսքերով ու գործերով անդադար աշխատում են ամէն ինչում երիտասարդներին օգնելու համար: Նրանց սիրելով հանդերձ, նրանցից չեն թաքցնում նրանց թերութիւնները ... : Քանի որ սիրուց մղուած է՝ որ հայրը չի լռում յանցանքներից առաջ, ակնյայտ է՝ որ քո հանդէպ իր սէրը հոգեւոր է»:

Իր նամակներում, Անտոնը, որ վերին աստիճանի գործովալի էր, արդէն իսկ կատարել էր նմանատիպ մի զանազանութիւն. «Որդեակներս, ձեր հանդէպ ունեցածս սէրը չի դալիս մարմնից, այլ Հոգուց, Աստծոյ ներգործութեամբ»: Եւ նաեւ իր աղօթքի առարկան է դառնում խնդրանքը, որ իր հոգեւոր որդիները ընդունակ լինեն ըմբռնելու իրենց հանդէպ իր ունեցած սիրոյ որպիսութիւնը. «Իսկապէս, որդեակներ իմ ի Տէր, ամէն օր ու ամէն գիշեր աղաչում են իմ Արարչին, որից ստացել եմ Հոգին, բացել ձեր սրտի աչքերը, որպէսզի ճանաչէք սէրը՝ որ ունեմ ձեր հանդէպ»:

Քանի որ հայրը իր որդիներին ճանաչում եւ սիրում է այնպէս՝ ինչպէս որ են Աստծոյ առաջ, կարիքը չունի ճանաչելու նրանց անուանները: Այսպիսին էր արքայ Յովսէփը, որն եւ ոչ իսկ մտածել էր հարցնել իր աշակերտի անունը, որի հետ ապրում էր արդէն երկու տարի: Անտոնը նոյնպէս, իր նամակներում, յաճախ է տեղեկացնում՝ որ իր աշակերտներին չի ողջունում՝ կանչելով նրանց իրենց «մահկանացու անունով, որ անցողիկ է եւ ունայն», այլ իրենց իրական հոգեւոր անունով, որն անշուշտ միայն ինքն է ճանաչում, Իսրայէլի որդիների նրանց անունն ըստ Հոգու:

Հայրական այս սիրոյ ջերմութեան ներսում, կամաց կամաց, տարիների ընթացքում, խոր մտերմութիւն է հիւսւում հօր եւ որդու միջեւ: Այսպիսի ընկերութեան յուզիչ օրինակներից մէկը գտնում ենք Անտոնի մահուան պահին – Անտոնը՝ որին «բոլորը փափաքում էին որպէս հայր ունենալ» – նկարագրութեան մէջ՝ որ աւանդել է մեզ Աթանասը. «Այս խօսքերից յետոյ, եղբայրները զրկախառնուեցին նրա հետ: Անտոնը պառկեց, հայեացքը դէպի վեր բարձրացրեց, դէպի նրանք՝ որ եկել էին իրեն այցելելու, նայեց նրանց այնպէս՝ կարծես իր ընկերները լինէին եւ ուրախացաւ նրանց գալու համար: Պառկած էր գուարթ դէմքով ... »: Վերջում, Անտոնն այլեւս գաղտնիքներ չունէր ամենամօտիկ որդիների համար: Խնդրեցին նրան պատմել իր ունեցած յափշտակութիւնների ու տեսիլքների մասին: Չմերժեց: «Ստիպուած էր խօսել», գրում է կենսագիրը, «ինչպէս մի հայր՝ որը ոչինչ չի կարող թաքցնել իր որդիներից»:

Բայց հայրը չի յայտնում միայն շնորհները, որ ստացել է. յաճախ իր որդիներին պատմում է նաեւ իր ունեցած փորձութիւններն ու մեղքերը, երիտասարդներին քաջալերելու նպատակով. «Ես, եղբայր, քանի որ այսքան տկար եմ, վարում էի այսպէս: Քեզ համար, հետեւաբար, որ շատ աւելի արթուն ես անձիդ պահպանման գործում, Աստուած կը կատարի նոյնքան»:

Մտերմութիւն, որ երբեմն տեսում է նաեւ մահից այն կողմ, ինչպէս այն հօր պարագային, որն իր հոգեւոր որդուն թաղելուց յետոյ հարցրեց նրան. «Լա՞ւ ես թաղուած, որդեակս, թէ՞ ինչ որ մի բան պակասում է քեզ»: Ննջեցեալը գերեզմանից պատասխանում է. «Լաւ եմ, հայր: Կատարեցիր խոստումդ»:

Հայրերի այս սիրոյն պատասխանում է որդիների սէրը: «Մխիթարիւր հօրդ», պատուիրում է Արսէնը, «որպէսզի նա, երբ հասնի Տիրոջ առաջ, աղօթի քո համար եւ նպաստի քեզ»: Որոշ դէպքերում, այս սէրն է հանդիսանում վանական

կանոնապահութեան լաւագոյն գրաւականը, ինչպէս տեղի էր ունենում ամմա Թաղիդէի վանքում, ուր վաթսուն երիտասարդ միանձնուհիներ «սիրում էին նրան այն աստիճան, որ վանքի արտաքին դռան վրայ չէին դրել ոչ մի փականք, ինչպէս սովորութիւն էր ուրիշ վանքերում: Կառավարում էին այն սիրուց, որ ունէին Թաղիդէի հանդէպ»:

Հօր նկատմամբ որդու սէրը պահանջում է այնուամենայնիւ որոշ չափաւորութիւն: Շարունակ հօր կողքին լինելը կարող է թաքցնել որոշ ծածուկ յաւակնոտութիւն. «Վանահօր հետ ընտանութիւն մի՛ ունեցիր, ո՛չ էլ յաճախ այցելիր նրան, որովհետեւ կարող ես աներես դառնալ եւ հրամայելու ցանկութիւնն ունենալ»: Հետեւաբար, այս սէրը միշտ պէտք է համաքայլ ընթանայ երկիւղի հետ, որովհետեւ միմիայն դիւրին ու մակերեսային քնքշանքը չէ՛ որ որդին իրաւունքն ունի սպասելու հոգեւոր հօրից, այլ երբեմն նաեւ խիստ միջամտութիւններ, երբ իրավիճակները պահանջում են դա: Իգիդորոսը ուսուցանում է. «Հարկաւոր է, որ աշակերտներն իրենց վարժապետներին սիրեն որպէս հայրեր եւ նրանցից երկնչեն որպէս միապետներ. սէրը չպէտք է թուլացնի երկիւղը, ո՛չ էլ վերջինս պէտք է խամրեցնի սէրը»:

Աղօթք

Սիրոյ այս երկխօսութեան մէջ, ամենաարդիւնաւէտ խօսքը միշտ մնում է այն մէկը՝ որ հայրն արտասանում է Աստծոյ առաջ, աղօթքով, ի նպաստ որդու՝ որին ծնել է կեանքի համար: Բարեխօսութիւնն է արբայի գերագոյն պարտականութիւնը: Յունարէն ապոֆտէզմաներից մէկը պահպանել է այսօրինակ աղօթքի մի կարճ բայց սքանչելի օրինակ. «Վանքերից մէկում կար մի սուրբ մարդ, ճոխացած ամէն տեսակ առաքինութիւններով, յատկապէս խոնարհութեամբ ու քաղցրութեամբ, ողորմութեամբ ու կարիքաւորների նկատմամբ սիրով: Բաւական երկար աղօթում էր Աստծուն ու ասում. "Տէր, գիտեմ՝ որ մեղաւոր եմ, բայց վստահում եմ ողորմածութեանդ եւ յուսով եմ փրկուել գթառատութեանդ շնորհիւ: Աղաչում եմ, ուրեմն, Տէր, յանուն Քո բարութեան, չբաժանես ինձ եղբայրներիցս, այլ անբաւ բարութեամբդ շնորհիր ինձ եւ նրանց Քո Արքայութիւնը"»:

Իր եղբօր համար աղօթողը, յամենայն դէպս, առաջինն ինքն է օգտւում այդ աղօթքից. «Եղբայրներից մէկն այցելեց կշռադատութեան պարգեւն ունեցող ծերերից մէկին եւ աղաչեց նրան այս խօսքերով. "Աղօթիր իմ համար, հայր, որովհետեւ տկար եմ": Ծերը պատասխանեց. "Հայրերից մէկն ասել է, որ ով իր ձեռքերով ձէթ է վերցնում հիւանդին օծելու համար, նախ ինքն է օգտւում իր ձեռքերով կատարուած օծումից: Այսպէս նաեւ ով աղօթում է տառապող եղբօր համար, վերջինիս օգտակարութիւնից առաջ՝ նախ ինքն է ունենում օգուտի իր բաժինը, շնորհիւ սիրոյ ու կարեկցանքի իր դիտաւորութեան"»:

Աղօթքի առաջին արդիւնքը տառապող եղբօրը մխիթարութիւն բերելը չէ անպայման: Աւելին, հոգեւոր հօր աղօթքն ու օրհնութիւնը յաճախ սանձազերծում են փորձութիւնները, որոնցից որդին պէտք է օգուտ քաղի: Այս համոզման ամենահին վկայութիւնը արբա Ամոնինն է: Միեւնոյն համոզմանն ի նպաստ վկայում է դպտի ժողովածոյի ապոֆտէզմաներից մէկը, որ գործածում է բաւականաչափ արտայայտիչ մի պատկեր, հասկացնելու համար՝ թէ հօր աղօթքը որքան կարող է ահարկու լինել որդու համար. «Եղբայրներից մէկը հարցրեց հայր Մակարին. "Սովորեցրու մեզ՝ թէ ինչ է նշանակում հնազանդութեան մէջ ապրելը": Հայր Մակարն ասաց նրան. "Ինչպէս որ աղորիքն է ցորենի վրայ պտտուելով մաքրում ամբողջ թեփը, եւ ցորենը դառնում է անապակ հաց, նոյնը քո պարագան է, որդեակ իմ. աղորիքը հայրդ է, իսկ դու՝ ցորենը. եթէ լսում ես հօրդ, նա քո համար կ'աղօթի Տիրոջը, կը մաքրի քեզ սատանայի բոլոր թեփերից, եւ անապակ հաց դառնալու փոխարէն՝ դու կը դառնաս Աստծոյ որդի"»:

Փորձութեան ամենաեռուն պահին է՝ որ հոգեւոր հօր աղօթքը ստանում է իր ամբողջ արդիւնաւէտութիւնը: Մակարը սա վկայում է իր հայր Անտոնի աղօթքների վերաբերեալ. «Իմ տէր արբա Անտոնի տուած դարմանները մարմնական չեն, այլ Մխիթարչի գօրութիւնն է գործում նրա աղօթքներում»:

աղօթելիս, յաճախ է պաշտպանութեան կանչում իր հօր աղօթքները եւ ապաւինում է նրանց: Աղօթքի այս ձեւը լայնօրէն տարածուած էր վանական միջավայրերում եւ մեծ համբաւ էր վայելում իր արդիւնաւէտութեան համար. «Տէր, շնորհիւ իմ հօր աղօթքների՝ փրկիր ինձ այս փորձութիւնից», կամ «Ո՛վ գորութիւնների Աստուած, ազատիր ինձ՝ յանուն իմ հօր աղօթքների»:

Հոգեւոր հօր աղօթքը երբեք զէնքերը վար չի դնում. հետեւում է որդուն մինչեւ իսկ մեղքի մէջ: Տեղեկանալով, որ իր աշակերտ Աբրահամը ընկել էր մեղքի մէջ, աբբա Սիդոնէն ոտքի ելաւ եւ ձեռքերը դէպի երկինք տարածեց ասելով. «Ո՛վ Աստուած, ուզում ես կամ ոչ, Քեզ հանգիստ չեմ թողնի, մինչեւ որ չբժշկես նրան»: Աղօթք, որ կարող է հանդուգն թուալ, բայց որ բխում է միմիայն այն անսասան վստահութիւնից, որ Աստուած չի կարող չընդունել հոգեւոր հօր աղօթքը, քանի որ նա է որդուն հասնող բոլոր շնորհների ջրանցքը:

Այս աղօթքը որդուն ընկերակցում է մինչեւ վերջինիս մահը. «Աբբա», ասում է մահամերձ մի վանական, «տեսնում եմ երկնային գորութիւնները, որ գալիս դէպի ինձ եւ ետ են վերադառնում շնորհիւ քո աղօթքների»: Նաեւ որդու մահից յետոյ, հօր աղօթքներն են՝ որ շարունակում են փրկել նրան: Երանելի Պօղոս Պարզասիրտը տեսիլքում տեսաւ քիչ օրեր առաջ մեռած իր աշակերտներից մէկին, որն իր ամբողջ կեանքի ընթացքում սակաւ ջերմեռանդ մէկն էր եղել. աշակերտը նրան ընդառաջ էր գալիս բերկրանքով լի եւ ասում էր. «Աղօթքներդ, հայր, շարժեցին Ամենասրբուհի Աստուածամօր գութը, որ քեզ շատ է սիրում: Նա աղաչեց Փրկչին եւ ազատեց ինձ իմ շղթաներից. ես իրօք կապուած էի մեղքերիս շղթաներով»: Հօր աղօթքը արդիւնաւէտ է մնում նաեւ իր մահից յետոյ: Պաղեստինում, աբբա Նիկողայոսը կանխաւ յայտնել էր իր կոյր աշակերտ Անտիոքոսին, որ իր մահուան յաջորդ շաբաթուայ ընթացքում վերստին ստանալու էր տեսողութիւնը: Ինչը որ իրականացաւ, մինչ Անտիոքոսը նստած լալիս էր Նիկողայոսի գերեզմանի մօտ:

Հոգեւոր հօր աղօթքների մասին այս վկայութիւնները եզրափակելու համար հարկաւոր էր ամբողջութեամբ մէջբերել այն նամակը, որ Բարսանուֆը գրել էր Անդրէաս անունով իր աշակերտին, որը խնդրել էր աղօթել իր համար. «Ուզում եմ յայտնել ձեզ, որ ձեր խնդրանքից առաջ արդէն վստահել էի ձեզ սուրբ, պաշտելի, համագոյակից եւ կենարար եւ յաւիտենական Երրորդութեանը, խնդրելով պաշտպանել ձեզ բոլոր չարիքներից: Բայց չեմ ուզում՝ որ անգիտանաք, թէ կայ մի ուրիշ, առաւել ահարկու եւ կարեւոր, առաւել սարսափելի, առաւել ցանկալի ու սիրելի, առաւել պատուելի ու փառաւոր աղօթք ... »: Խօսքն անկասկած վերաբերում է վերջին դատաստանին, երբ հոգեւոր հայրերից իւրաքանչիւրը կանչուելու է խօսք վերցնելու եւ իր որդիներին ներկայացնելու. «Սրբերից իւրաքանչիւրը, Աստուծոն ընծայելով այն որդիները՝ որոնց փրկել է, յստակ ձայնով եւ ամենայն վստահութեամբ, սուրբ հրեշտակների եւ երկնային բոլոր գորութիւնների ապշանքի ընկերակցութեամբ, ասելու է. "Ահաւասիկ, ես եւ որդիները՝ որ Աստուած տուեց ինձ"»: Այսպիսով, հօր աղօթքը ընկերանում է որդուն այն պահից սկսած՝ ինչ ընդունում է նրան որպէս որդի, մինչեւ յաւիտենականութիւն, Դատաւորի գահի առաջ:

Որդի՝ հայր դառնալու համար

Առաջին վանականների կեանքում հոգեւոր հօր փորձառութեան խաղացած կարեւորագոյն դերը, չպէտք է մոռանալ, այն նոյնպէս ժամանակաւոր է ու անցողիկ: Եթէ էական է մի հոգեւոր հօր դիմելը, եւ ոչ թէ միաժամանակ տարբեր անձերի, նոյնքան կարեւոր է, սակայն, հոգեւոր հօրը չկապուելը մոռանալու աստիճան Նրան՝ որի անունից է նա խօսում: Կար մի եղբայր, որը կամենում էր լքել վանական կեանքը, որովհետեւ հանրայայտ աբբան, որին կամենում էր հետեւել, բաւական չէր զբաղւում իրենով: Ահա յանդիմանութիւնը, որ ստանում է. «Աստուած իրաւացիօրէն թողեց, որ չզբաղուեմ քեզնով, որովհետեւ դու ոչ թէ Իրեն էիր ապաւինում, այլ ինձ»: Անձնականութեան որեւէ պաշտամունք խորթ է վանականութեանը: Հոգեւոր հայրը ոչնչի չի ծառայում, երբ դադարում է լինել Աստուծոյ ներգործութեան հայելին:

Հօր հետ որդու ունեցած յարաբերութիւնները միշտ սահմանուած են յեղաշրջուելու: Գալու է օրը՝ երբ որդին ի վիճակի է լինելու անջատուել իր հօրից, եւ սա լինելու է հոգեւոր հայրութեան ամենաակնյայտ պտուղը: Հայրերը երբեմն խոստովանում են, որ հոգեւոր կեանքում իրենց որդիները բաւական գերազանցում են իրենց: Աբբա Քարիոնը, օրինակի համար, ասում է. «Իմ որդի Զաքարիայից աւելի ենթարկուեցի մարմնի բազում յոգնութիւնների, բայց ինչ վերաբերուած է խոնարհութեանն ու լուսութեանը, չհասայ նրա հասակին»: Բարսանուֆը խորհուրդ է տալիս իր որդուն աղօթել, որպէսզի իրեն շնորհուի Սուրբ Հոգին, որովհետեւ այլեւս նա է «մեծ Առաջնորդը», որ կարող է իսկապէս փրկել իրեն եւ ձեռքից բռնած առաջնորդել, մինչ այլեւս պատճառ չունի այդքան յարգանք ցուցաբերել հոգեւոր հօր հանդէպ:

Յայտնի են մի քանի դէպքեր, որոնցում դերերը փոխուում են որոշ ժամանակ անց. որդին դառնում է հայրը նրա՝ ով սկզբում իր հայրն էր, եւ ընդհակառակն: Այս դէպքերում, մեր առջեւ ունենք սիրոյ ու խոնարհութեան գազաթնակէտերից մէկը: «Ծերերից մէկն ունէր մի բարի աշակերտ: Մի օր, մինչ գայրացած էր, նրան դուրս վունդեց իր պատմուճանով: Բայց եղբայրը դրսում նստած մնաց: Ծերը, դուռը բացելով, նրան նստած գտաւ: Յայնժամ խոնարհուեց նրա առջեւ, ասելով. "Ո՛վ հայր, հոգուդ ընդարձակութեան խոնարհութիւնը յաղթեց գայրոյթիս: Ներս մտիր. այսուհետեւ դու ես ծեր եւ հայր, ես՝ երիտասարդ ու աշակերտ"»:

«Հնազանդուել հոգեւոր հօրը եւ հրաժարուել սեփական կամքից». սա, ուրեմն, հոգեւոր ճշմարիտ բուժարուեստ է, աւետարանական ընթացք, որն իր մէջ բովանդակում է վանական փորձառութեան ամբողջութիւնը: Վանական հին գրականութիւնը ճշտում է նրա պայմանները եւ մեծարում է նրա առաւելութիւնները: Այս ուղին համեմատուած է վանական կեանքի ուրիշ կերպերի հետ, եւ համեմատութիւնը միշտ երեւան է հանում սրա առանձնաշնորհութիւնները: «Հայր Յովսէփ Թէբէացին ասում էր. "Երեք բաներ են թանկարժէք Աստծոյ առաջ. առաջինը, եթէ հիւանդ ենք եւ հիւանդութեանը գումարում են նաեւ փորձութիւնները եւ մենք այս բոլորը ընդունում ենք երախտագիտութեամբ: Երկրորդը, եթէ մեր գործերից իւրաքանչիւրն ամբիժ է Աստծոյ առաջ, մարդկային ոչ մի բանի խառնուած: Երրորդը, եթէ հնազանդութեամբ ենթարկուում ենք հոգեւոր հօրը եւ հրաժարում ենք մեր սեփական կամքից: Այս վերջին դէպքում, գործադրողը արժանանալու է վիթխարի փառքի"»:

Աբբա Ռուփոսի ապոֆտէզմաներից մէկը, որ պարունակում է նախորդի առաւել ընդարձակ տարբերակը, փակում է բանաստեղծական սլացքով, որը բացարձակ կերպով բացառիկ է Հայրերի սովորաբար զուսպ բառապաշարի ներսում. «Ո՛վ հնազանդութիւն, փրկութիւն բոլոր հաւատացեալների: Ո՛վ հնազանդութիւն, մայր բոլոր առաքինութիւնների: Ո՛վ հնազանդութիւն, Արքայութիւնը գտնող: Ո՛վ հնազանդութիւն, որ բացում ես երկինքը եւ մարդկանց բարձրացնում ես երկրից: Ո՛վ հնազանդութիւն, սնունդ քեզնով կերակրուած եւ քո շնորհիւ կատարեալ դարձած բոլոր սրբերի: Ո՛վ հնազանդութիւն, որ բնակում ես հրեշտակների կողքին»:

Հանդիսանալով որպէս խորհրդաւոր մի ուժ, որ բխում է հաղորդութիւնից՝ որի ներսում հայրն ու որդին մէկը միւսի դիմաց կանգնում են սեփական ցանկութիւններից փոխադարձ հրաժարման մէջ, հնազանդութիւնն այսպիսով յայտնում է Աստծոյ կամքը եւ մի նոր կեանքի է ծնում նրան՝ ով, հօր խօսքի միջոցով, թողնում է՝ որ վերակերպարանաւորեն իրեն: Իսկ հայրը, որն իր խոնարհութեամբ հանդիսանում է այս խորհուրդի գործիքը, իսկապէս արժանի է «kaloghiros», «գեղեցիկ ծեր» անուանը, որովհետեւ աստուածային գեղեցկութիւնը նրա հոգում դառնում է պտղաբեր, նրան որպէս պարգեւ տրուած որդու միջոցով: Երանելի՛ պաշտօն, որով հասնում է նմանուելու Ինքնին Աստծուն:

